

ԱՐՔՅՈՒՐՆԵՐ



- Դիմակների, ներառյալ շնչառական դիմակների (respirator) մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք՝ <http://ph.lacounty.gov/masks>.
- Cal/OSHA կանոնների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք՝ <https://www.dir.ca.gov/dosh/coronavirus/COVID19FAQs.htm>
- Վճարովի արձակուրդի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք՝ <https://www.dir.ca.gov/dlse/COVID19Resources/2022-SPSL-FAQs.html>
- Եթե COVID-19-ի պատճառով կորցրել եք ձեր աշխատանքը կամ կրճատվել են ձեր աշխատաժամերը, դուք կարող եք իրավասու լինել դիմել գործազրկության նպաստներից օգտվելու համար: Դիմելու համար այցելե՛ք՝ https://www.edd.ca.gov/about_edd/coronavirus-2019/workers.htm
- Գործատուների և կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի լրացուցիչ նպաստների մասին տեղեկությունների համար, որոնք դուք իրավասու եք ստանալ, այցելե՛ք՝ <https://www.saferatwork.la/employees>
- Cal/OSHA-ին դիմում-բողոք ներկայացնելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք՝ <https://www.dir.ca.gov/covid/workplace-issues.html>.

ԽՈՐԾԱՏՈՒԼԻԳՆԵՐ ԶՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



- Եթե դուք ժամանակին չեք ստացել COVID-19 -ի դեմ բոլոր անհրաժեշտ պատվաստումները, ունեք լուրջ առողջական խնդիր, իմունային անբավարարվածություն կամ տարեց եք, դուք կարող եք գտնվել [ծանր հիվանդանալու ավելի բարձր վտանգի խմբում](#), եթե դուք վարակվեք COVID-19-ով: Աշխատանքի ընթացքում ինքներդ ձեզ պաշտպանելու համար կատարեք հետևյալ քայլերը-
 - Ձեր գործատուից պահանջեք շնչառական դիմակ (respirator): Մշտապես կրեք այն փակ տարածքներում ուրիշների շրջապատում կամ ուրիշների հետ փոխադրամիջոցում գտնվելիս: Այն պետք է կրեք նաև բացօթյա տարածքում գտնվելիս, եթե չեք կարող պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն ուրիշներից: Եթե չեք կարողանում կրել շնչառական դիմակ, փորձեք կրել <<[կրկնակի դիմակ](#)>> (վիրաբուժական դիմակի վրայից կրեք դեմքը լավ գրկող կտորե դիմակ):
1. Ուրիշներից պահպանեք 6 ոտնաչափ հեռավորություն, եթե ձեր աշխատանքային պայմանները դա թույլ են տալիս:
 2. Ընդմիջումները, երբ դուք պետք է հանեք ձեր դիմակը ուստի կամ խմելու համար, փորձեք անցկացնել բացօթյա տարածքում: Եթե դուք պետք է ուստեք փակ տարածքում այլ անձանց շրջապատում, բացեք պատուհանները և դռները և հնարավորինս հեռավորություն պահպանեք ուրիշներից:
 3. Բացեք պատուհանները կամ դռները ձեր աշխատանքային տարածքում, եթե դա անվտանգ է: Թարմ օդն օգնում է նվազեցնել օդում կաթիլների քանակը՝ նվազեցնելով COVID-19-ով վարակվելու վտանգը
 - Եթե դուք վարակվեք COVID-19-ով, դուք կարող եք ձեռք բերել դեղամիջոցներ, որոնք բուժում են COVID-19-ը և օգնում են ձեզ չհայտնվել հիվանդանոցում: Այս դեղերը լավագույնս գործում են, երբ դրանք ընդունվում սկսվում է COVID-19-ով վարակվելուց հետո հնարավորինս շուտ և 5-7 օրվա ընթացքում՝ կախված դեղամիջոցից: Խոսեք ձեր բժշկի հետ կամ գնագահարեք (833) 540-0473 հեռախոսահամարով: Իմացեք ավելին՝ ph.lacounty.gov/covidmedicines կայքէջում:



COVID-19-ի Անվտանգություն. Աշխատողների Իրավունքները Կալիֆորնիայում

Los Angeles County
Department of Public Health
www.publichealth.lacounty.gov



COVID-19-ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԱԼԻՓՈՐՆԻԱՅՈՒՄ

Համաձայն Cal/OSHA-ի՝ ձեր գործատուից պահանջվում է քայլեր ձեռնարկել ձեզ COVID-19-ից պաշտպանելու համար: Իմացեք ձեր իրավունքները և հաղորդեք խախտումների մասին հետևյալ տարբերակներով՝

- Չրուցեք ձեր միության ներկայացուցչի հետ:
- Ներկայացրեք դիմում բողոք Cal/OSHA -ին՝ զանգահարելով 833-579-0927 հեռախոսահամարով:
- Բողոք ներկայացրեք Հանրային Առողջության Վարչություն՝ զանգահարելով 888-700-7995 հեռախոսահամարով: Բողոքը կարող էր ներկայացնել անանուն:



ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

- Ձեր գործատուն պետք է աշխատավայրում ունենա COVID-19-ի տարածումը կանխելու ծրագիր: Գործատուն պետք է բոլոր աշխատողներին տրամադրի վերապատրաստում COVID-19-ի կանխարգելման տվյալ ծրագրի և [Cal/OSHA կանոններով](#) սահմանված նրանց իրավունքների վերաբերյալ:



ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՇՏՊԱՆԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (ԿԱՍ “ՔՔԷ”)

- Խստորեն հորդորվում է, սակայն չի պահանջվում, որ բոլոր աշխատողները կրեն դիմակ փակ տարածքում աշխատելիս կամ ընդհանուր փոխադրամիջոցով երթևեկելիս: Ծարուռակական դիմակ կրելը առաջարկելու նպատակն է կանխել վիրուսի փոխանցումը հատկապես ծանր հիվանդանալու բարձր վտանգի խմբում գտնվող անձանց և վարակի հետ երկարատև, հաստատուն շփում ունեցող անձանց (օրինակ՝ աշխատողներին):
- Եթե դուք աշխատում եք փակ տարածքում կամ երթևեկում են փոխադրամիջոցով մեկից ավելի անձանց հետ, ձեր գործատուն պետք է ձեզ տրամադրի դեմքը լավ գրկող դիմակներ և/կամ շնչառական դիմակներ՝ ըստ ձեր պահանջի: Դուք կարող եք ձեր ցանկությամբ դրանք կրել կամ չկրել: Եթե դուք պահանջում եք N95 (NIOSH-ի կողմից հավաստագրված) շնչառական դիմակ, ձեր գործատուն պետք է տրամադրի ճիշտ չափի դիմակ, ինչպես նաև դրանց օգտագործման [հիմնական հրահանգները](#): Սա վերաբերում է բոլորին՝ անկախ նրանից՝ լիովին պատվաստված եք, թե ոչ:
- Եթե ձեր գործատուն պահանջում է, որ դուք դիմակ կրեք փակ տարածքում, նա պետք է տրամադրի դեմքը լավ գրկող բժշկական դիմակներ:
- Ինչպես գործատուների անվտանգության բոլոր պահանջների դեպքում, դիմակների և շնչառական դիմակների արժեքը չպետք է վճարեն աշխատակիցները: Սա նշանակում է, որ ձեր գործատուն պետք է ձեզ անվճար տրամադրի և փոխարինի դիմակը կամ շնչառական դիմակը:
- Ձեր գործատուն չի կարող ձեզ վատ վերաբերվել աշխատանքի վայրում դիմակ կրելու համար կամ խրախուսել դիմակ չկրել:
- Թեև բոլոր դիմակներն ապահովում են որոշակի մակարդակի պաշտպանություն, դեմքը լավ գրկող շնչառական դիմակները, հատկապես N95-ները, ապահովում են լավագույն պաշտպանություն:
 - Ձեր շնչառական դիմակը պետք է փոխարինվի վնասվելու, ձևափոխվելու, թրջվելու, կեղտոտվելու կամ դրանով շնչելը դժվարանալու դեպքում: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է փոխել շնչառական դիմակը յուրաքանչյուր հերթափոխի սկզբում: [CDC-ի խորհուրդ է տալիս](#) փոխել շնչառական սարքը հինգ անգամ այն դնելուց և հանելուց հետո: Դուք կարող եք ծանոթանալ արտադրողի ցուցումներին, թե երբ այն պետք է փոխարինվի և ինչպես պետք է այն պահվի կրկին օգտագործման համար:



ՁԵՌՔԵՐԸ ԼՎԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԸ

- Գործատուները պետք է ապահովեն օճառով, ջրով և/կամ ձեռքերի ախտահանիչ միջոցներով հագեցած ձեռքերի լվացման կայաններ: Դրանք պետք է տեղակայված լինեն ձեր աշխատավայրում և ցանկացած փոխադրամիջոցում, որով դուք կարող եք երթևեկել:
- Գործատուները աշխատանքային օրվա ընթացքում ձեզ պետք է նաև բավարար ժամանակ տրամադրեն ձեռքերը մաքրելու համար:



COVID-19-Ի ԹԵՍԱՎՈՐՈՒՄ

- Գործատուները աշխատանքային ժամերին պետք է անվճար թեստավորում առաջարկեն ցանկացած աշխատակցի, որը՝
 - o Ունի COVID-19-ի ախտանիշներ
 - o Շփվել է COVID-19-ի վարակի հետ աշխատանքի ընթացքում՝ բացառությամբ նրանց, ովքեր ապաքինվել են COVID-19-ից վերջին 90 օրվա ընթացքում և չունեն ախտանիշներ:
 - o Կարիք ունի թեստավորման՝ աշխատավայրում վարակի հետ շփվելուց հետո աշխատելու կամ մեկուսացման մեջ լինելու դեպքում՝ ավելի շուտ աշխատանքի վերադառնալու համար:
- Թեստավորումը կարող է առաջարկվել ձեր գործատուի, առողջապահության տեղային վարչության, դաշնային կառավարության, առողջապահական ծրագրի կամ համայնքային թեստավորման վայրի կողմից:



ՎՃՐՈՎԻ ԱՐՁԱԿՈՒՐԳ

- Ձեր գործատուն պետք է վճարի արձակուրդի համար (հայտնի որպես բացակայության վճար), եթե ձեզինք պահանջվել է մնալ տանը, քանի որ վարակվել եք COVID-19-ով կամ շփվել եք COVID-19-ի վարակակրի հետ աշխատանքի ընթացքում: Գործատուն պետք է վճարի ձեզ ձեր կանոնավոր աշխատավարձն այն ժամանակահատվածի համար, որը ձեզանից պահանջվում է տանը մնալու համար:
- Դուք կարող եք նաև վճարվել աշխատանքից բացակայելու համար COVID-19-ի Հիվանդության հիմքով՝ լրացուցիչ վճարովի արձակուրդի ծրագրի միջոցով, նույնիսկ եթե աշխատավայրում չեք շփվել վարակի հետ: Եթե իրավասու եք, այս ծրագիրը տրամադրում է վճարովի արձակուրդ՝ COVID-19-ի դեմ պատվաստվելու, պատվաստմանը հաջորդող ախտանիշներից ապաքինվելու համար, կամ եթե ձեզ հարկավոր է հոգ տանել COVID-19-ով վարակված կամ կամ կարանտին պահպանելու անհրաժեշտություն ունեցող ընտանիքի անդամի մասին: Լրացուցիչ տեղեկությունները համար տե՛ս COVID-19-ի Հիվանդության հիմքով՝ լրացուցիչ վճարովի արձակուրդի [ցուցանակը](#) և [ՀՏՀ](#)-ն:



ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ ԵԹԵ ՈՒՐՆԵՄ COVID-19-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱԼՊՎԱԾ ՄՏԱՀՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

- Կարող եք գրուցել ձեր միության ներկայացուցչի հետ:
- Կարող եք դիմում-բողոք ներկայացնել Cal/OSHA -ին՝ զանգահարելով 833-579-0927 հեռախոսահամարով:
- Կարող եք բողոք ներկայացնել Հանրային Առողջության Վարչություն՝ զանգահարելով 888-700-7995 հեռախոսահամարով: Բողոքը կարող էր ներկայացնել անանուն:



Իմացեք Ձեր Իրավունքները